

Միբեղի՛ երեխաներ,

Մասիս համայնքի իմ փոքրիկ բարեկամներ, մեր կյանքի լուսատուներ,

Ջերմորեն շնորհավորում եմ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ:

Անհերքելի իրողություն է, որ երեխաներն են մեր ներկան ջերմացնողները և ապագան կերտողները, իսկ նրանց անհոգ մանկության պատասխանատուն մեզանից յուրաքանչյուրն է:

Այսօր, ցավոք, մեր երկրում տեղի ունեցող զարգացումներն անուղղակիորեն ազդում են նաև մեր երեխաների վրա:

Մենք պետք է ամեն ջանք գործադրենք, որ մեր երեխաներն ապրեն ապահով, բարեկեցիկ, անվտանգ ու խաղաղ երկրում:

Միբեղի՛ մանուկներ,

Թող տարվա բոլոր օրերը տոնական լինեն ձեզ համար, և դուք շրջապատված լինեք ընտանեկան սիրով ու ջերմությամբ:

Թող իրականություն դառնան ձեր ամենաանհավանական թվացող երազանքները:

Ժպտառատ ու խաղաղ մանկություն ձեզ:

Աստված պահապան բոլոր մանուկներին: